ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 23 » հունվարի 2020թ. № 19

ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, հաշվի առնելով աշխատակազմի քարտուղար Անահիտ Գյուլազյանի զեկուցագիրը Բանակի օրվան նվիրված միջոցառումներ կազմակերպելու նպատակով շնորհավորական բացիկներ և նվերներ ձեռք բերելու նպատակով՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4267 հոդվածից հատկացնել 574 900 ՀՀ դրամ, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածից՝ 47 690 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունվարի 2020թ. № 20

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի «բ» պարբերության, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոց, թիվ 20ա բազմաբնակարան շենքի (հողամասի կադաստրային ծածկագիր՝ 06-006-0517-0030) 3-րդ հարկում գտնվող 58,41 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակարանի նկատմամբ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց, թիվ 20/1 շենք, թիվ 12 բնակարան» հասցեն:

3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանին՝ գույքի պետական գրանցումից հետո սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

<< 23 >> հունվարի 2020թ. № 21

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով և 29-րդ կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունները և «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ա.Մյասնիկյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարիետա Ավետիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող «ք.Սպիտակ, Մյասնիկյան փողոց, թիվ 1» հասցեում գտնվող 1,42457 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձին 3 գույքային միավորների բաժանված՝ 1,32489 հեկտար մակերեսով, 0,06032 հեկտար մակերեսով և 0,03936 հեկտար մակերեսով անշարժ գույքերի ճշգրտված հատակագծերը:

2. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Մյասնիկյան փողոցի վրա գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 1,32489 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «ք.Սպիտակ, Մյասնիկյան փողոց, թիվ 1» հասցեն, Սպիտակ համայնքի Մյասնիկյան փողոցի վրա գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,06032 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Մյասնիկյան փողոց, թիվ 1/1» հասցեն, Սպիտակ համայնքի Մյասնիկյան փողոցի վրա գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,03936 հեկտար մակերեսով հասրակական կառուցապատման հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Մյասնիկյան փողոց, թիվ 1/2» հասցեն:

3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

4. Հայաստանի Հանրապետությանը՝ անշարժ գույքի միավորների պետական գրանցումը կատարելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմել Սպիտակի համանքապետարան սույն որոշման 2-րդ կետում նշված 0,06032 հեկտար մակերեսով հողամասի վրա առկա ինքնակամ շինությունը օրինականացնելու գործընթաց սկսելու նպատակով:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունվարի 2020թ. № 22

ԱՎԵՏԻՔ ԲՈՅԱԽՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1955756 վկայականը և Ավետիք Սանասարի Բոյախչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ավետիք Սանասարի Բոյախչյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող 06006 51-7 կադաստրային ծածկագրով 0,099 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին, դրա վրա գտնվող 06006 51-7-1 կադաստրային ծածկագրով 129,3 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 06006 51-7-2 կադաստրային ծածկագրով 51,0 քառակուսի մետր մակերեսով մառանին տրամադրել «քաղաք Սպիտակ, Պանրագործների թաղամաս, 2-րդ նրբ., թիվ 1» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունվարի 2020թ. № 23

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարուժան Օնիկի Թորոսյանի մահից հետո Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող անշարժ գույքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2020 թվականի հունվարի 17-ի վկայագրի փոխանցվել է Վալենտինա Միտրոֆանովնա Թորոսյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Վալենտինա Միտրոֆանովնա Թորոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վալենտինա Միտրոֆանովնա Թորոսյանին ժառանգաբար փոխանցված Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 0,0544 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 384» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվարի 23
ք.Սպիտակ